## ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ

# ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձեռքով Երեւանում պաշտոնապես բացվեց «Եվրոպական բժշկական կենտրոնը»

*(European Medical Center)*

Շաբաթ օրը՝ մայիսի 19-ի հետմիջօրեին քաղաքամայր Երեւանում բացումը կատարվեց մի եզակի հաստատության՝ «Եվրոպական բժշկական կենտրոնի» (European Medical Center): Մուտքի աստղազարդ կապույտ ժապավենը անձամբ կտրեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Պաշտոնական


ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը կտրում է կենտրոնի պաշտոնական բացման ժապավենը:

բացման հանդիսությանը ներկա էին նաեւ Մոսկվայից հատուկ ժամանած Ֆրանսիա-Ռուսաստան-Հայաստան այս բժշկական հաստատության նախագահ, ֆրանսահայ Անդրե Կոբուլոֆը, ֆրանսիացի հանրաճանաչ բժշկագետներ դոկտոր Մոնեն ու դոկտոր Ռեբուարը: Ներկա էին նաեւ Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը, ՀՀ առողջապահության նախարար Արարատ Մկրտչյանը, ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը, Երեւանի բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը, Ֆրանսիայի եւ Իտալիայի դեսպանները, պետական ու դիվանագիտական դեմքեր, հյուրեր:

«Եվրոպական բժշկական կենտրոնի» հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Հայկ Սավգյանի ընկերակցությամբ ՀՀ նախագահն ու շքախումբը, զանգվածային լրատվության ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելեցին նորաբաց բժշկական կենտրոնի արդիական տեխնիկայով հագեցած, անբասիր մաքրությամբ փայլող մասնաբաժինները: Հանրապետության նախագահը զրուցեց պրոֆեսոր Յանգի (ԱՄՆ) եւ ատամնաբուժական մասնաբաժնի ղեկավար, դոկտոր Բրեժոյի հետ (Ֆրանսիա): Ապա հյուրասիրության ջերմ մթնոլորտում բժշկագետ Ա. Կոբուլոֆը հուշամեդալ նվիրեց նախագահ Ռ. Քոչարյանին՝ խոստանալով ամեն ինչ անել, որ այս բժշկական կենտրոնը (որը 2 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է) ծառայի Հայաստանի ժողովրդի առողջապահության բարելավմանը:



Երեւանի Եվրոպական բժշկական կենտրոնը:

«Եվրոպական բժշկական կենտրոնի» ղեկավարությանը շնորհավորեցին նաեւ Ֆրանսիայի դեսպան Մ. Լեգրան եւ Իտալիայի դեսպան Ա. Թրաբալցան:

Ավելի քան մեկ ժամ տեւած շնորհանդեսը վերջացավ բարեմաղթությունների ու շնորհավորանքների մթնոլորտում: Զանգվածային լրատվամիջոցներին մեկնելու պահին իրենց խոսքը փոխանցեցին ՀՀ նախագահը եւ ՀՀ առողջապահության նախարարը: Իսկ բժշկական կենտրոնի տնօրեն Հայկ Սավգյանը մասնավորապես նշեց, որ նորաբաց այս առողջապահության «օազիսը» հատուկ բուժման գներ է նշանակել, որպեսզի Հայաստանի ու մայրաքաղաքի բնակչությունը կարողանա օգտվել մատուցվող բժշկական ծառայություններից ու բարդ բուժումներից, որոնք իրականացնում են ճանաչված հայ եւ օտար մասնագետները:

Հիշեցնենք, որ «Եվրոպական բժշկական կենտրոնի» առավել տպավորիչ մասնաբաժինները՝ ատամնաբուժական եւ ընտանեկան բժշկության սենյակներ էին, որոնք օժտված էին գերարդիական, համակարգչային ու մոնիտորական գործիքներով, սարքերով: Ֆրանսիացի փորձառու ատամնաբույժ դոկտ. Բրեժոն իրականացնում է նաեւ կոսմետիկական ատամնաբուժություն, ատամի պլաստինայի եւ այլ բարդ գործողություններ՝ օգտագործելով այնպիսի արհեստական ատամներ, որոնք ավելի դիմակայուն են, քան իսկականը:


Ռ. Քոչարյանը բժշկական կենտրոնի աշխատողների հետ:


Պրոֆեսոր Յանգը (ԱՄՆ) բացատրություններ է տալիս նախագահին:


Նախագահը զրուցում է Անդրե Կոբուլոֆի հետ:


Եվրոպական բժշկական կենտրոնի տնօրեն Հ. Սավգյանը ներկայացնում է մասնաբաժինները:

Ընտանեկան բժշկության մասնագետ, ամերիկացի պրոֆեսոր Յանգը երկարամյա փորձ ունի առողջապահության, վնասվածքների եւ սրտի հիվանդության բնագավառներում: «Եվրոպական բժշկական կենտրոնը» բուժման համալիր մեթոդներ ունի նաեւ ներքին օրգանների, համաճարակային իրավիճակների, քաղցկեղի կանխարգելման միջոցառումների, ակնաբուժության, հոգեբուժության եւ այլ հիվանդությունների դեմ: Հիվանդների տրամադրության տակ է շտապօգնության մեքենան, որը նույնպես օժտված է բժշկական նորագույն սարքերով: Կենտրոնը 120 նոր աշխատատեղեր է բացում՝ պատրաստ լինելով համագործակցելու Հայաստանի բոլոր կլինիկաների հետ, նախապատրաստելու բարձրորակ մասնագետներ բժշկագիտության բնագավառում:

ՀԱՄՌ ՄՈՍԿՈՖՅԱՆ,
Երեւան


Շնորհանդեսի ավարտին Ռ. Քոչարյանն իր կարծիքն է հայտնում լրագրողներին:

